













սահակեանը չի առարկում Լէոյի ոչ մի խօսքին. ո՛չ ինքնաքննադատութեանը, ո՛չ կուսակցութիւնների հասցէին ասուած խիստ կշտամբանքներին, ո՛չ էլ պահպանողականների նկատմամբ համակրանքի ջերմ խօսքերին: Հակուած ենք կարծելու, որ Լէոյի՝ ազգային-ազատագրական պայքարում թոյլ տուած սխալների քննադատութիւնը ճիշտ է, բայց յետագարձ հայեացքով պահպանողականներին անսխալական ներկայացնելը՝ համակողմանի է հիմնաւորուած:

Անշուշտ, մենք հեռու ենք Լէոյի հայրենանուէր վաստակը գնահատելիս՝ պատմաբանի վերջին շեղումները բացարձականացնելուց: Համոզուած ենք, որ նոյնիսկ եթէ նրա մտաւոր գործունէութիւնը 1920 թուականով ընդհատուէր, ապա, միեւնոյն է, այսօր պիտի բարձրաձայնէինք, որ մինչխորհրդային ոչ մի հեղինակ այնքան ճշգրտութեամբ չի բնութագրել Արեւմուտքի եղկելի դերը հայ ժողովրդի, Հայկական հարցի նկատմամբ, որքան Լէոն: Նա է համակողմանիօրէն բացայայտել մեծ տէրութիւնների հակահայկական քաղաքականութիւնը եւ այդ քաղաքականութեան ռազմաստրատեգիական պատճառները: Լէոն է Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ յօդուածը Բեռլինի դաշնագրի 61-րդ յօդուածի փոխակերպուելը համարել համաշխարհային դիւանագիտութեան նենգ գործարքներից մէկը, գործարք, որից յետոյ մեծ տէրութիւնների մրցակցութիւնը, պատմաբանի արտայայտութեամբ, այնպիսի կատաղի եւ անբարոյական կերպարանք ընդունեց, որ անկարելի դարձրեց նրանց միջեւ համաձայնութեան կայացումը Թուրքիայի վերաբերեալ որեւէ հարցում: Եթէ մէկը սուլթանին վախեցնելու եւ նրանից շահաւէտ ձեռնարկներ կորզելու համար հայերին պաշտպան էր հանդիսանում, միւսը գնում էր նոյն սուլթանին հովանաւորելու ընդդէմ այդ հայասէր պիտակով դիմակաւորուած արտ-

յեանի՝ իր այդ պիտակը հնչուն դրամի վերածելու համար:

Ամփոփենք: Լէոյի աշխարհայեացքը բարդ էր ու հակասական: Սակայն, անգամ իրարամերժ տեսակէտների եւ ըմբռնումների դրսեւորումներում տաղանդաւոր գիտնականի միտքը բացառիկ զգայուն էր իր ժողովրդի ճակատագրի հետ կապուած ամենատարբեր կացութիւնները գնահատելիս: Լէոյի հայագիտական բոլոր աշխատութիւնների առանցքը մէկն է. անցեալի էջերում, անցեալի փորձի մէջ որոնել Հայաստանի ազատագրութեան, հայ ժողովրդի ապահովութեան ուղիների բանալին: Պատահական չէ, որ ինչքան էլ նա խտացնէր ցարիզմի «խարդախ» քաղաքականութեան գոյները՝ հարկադրուած էր խոստովանել, որ «եսամոլ եւ շահամոլ» ռուսական նուաճողականութիւնը, այնուամենայնիւ, «նման էր նախընթացներին գէթ նրանով, որ անապատի ամայութիւն չէր բերում երկրներին եւ կոտորած ու աւերում՝ նրա բնակիչներին»: Սա նշանակում է, որ Լէոն ունէր այն խոր գիտակցութիւնը, որ, ձգտելով գրաւել Մերձաւոր արեւելքի որոշ տարածքներ, ջանալով դրանց ենթարկել իր ցարական ծանր ռեժիմին՝ Ռուսաստանը նուաճուած երկրները ակամայ ներգրաւելու էր հզօր շարժումների մէջ՝ հնարաւորութիւն տալով հաղորդակցուելու եւրոպական մշակոյթին<sup>30</sup>: Հարկ ենք համարում միաժամանակ նշել, որ հայ նոր պատմագիտութեան եւ մշակոյթի այդ մեծ երախտաւորը բարձր գնահատեց հայոց բնօրրանի մի փոքր հատուածում խորհրդային կարգերի հաստատումը ոչ թէ այն բանի համար, որ նա համակիր էր մարդկային հասարակութեան պատմութեանը տակաւին անյայտ կարգերին, այլ ամէնից առաջ նրա համար, որ «խսպառ ոչնչանալու վտանգը կախուած էր եւ արեւելահայութեան վզից,

30 Լէո, Հայոց պատմութիւն, Արագոյն շրջան, էջ 162:

եթէ Անդրկովկասը խորհրդային իշխանութեան տակ չմտնէր...»<sup>31</sup>: Այդպէս էին մտածում ժամանակի բոլոր հայ մեծերը:

Լէոյի միտքը մի իւրօրինակ կամերտոն էր՝ զգայուն իր ժողովրդի ճակատագրի հետ առնչուող քաղաքական ամենատարբեր կացութիւնները գնահատելիս: Հարկաւ, ժամանակը մերժել ու մերժելու է Լէոյի որոշ տեսակէտները՝ տեղ բացելով նոր պայմանների թելադրած առաջնահերթ հիմնադրոյթների համար: Սակայն նրա հայոց պատմութեան հատորները, բազում

մենագրութիւնները, հարիւրաւոր գիտահետազոտարկախօսական յօդուածները կը մնան որպէս սերունդներ յուզող ու դատարակող անանց արժէքներ: Լէոն պատկանում է հայագիտութեան այն դասականների շարքին, որոնց ժառանգութիւնը կանների շարքին, որոնց ժառանգութիւնը չի հնանում ժամանակի հոլովոյթից, այլ իւրացուած, վերաիմաստաւորուած եւ օգտագործուած է մտաւոր նոր արժէքների ատարածում է մտաւոր նոր արժէքների արժան համար: Սրանում է հայագիտութեան ուրոյն գէմքերից մէկը՝ Լէոյի ժառանգութեան արդիական խորհուրդը:

31 Լէո, Թուրքահայ լեղափոխութեան գաղափարաբանութիւնը, էջ 5: